

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 2017 թվականի N -Ն

«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հիմնադրել «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ):

2. Սահմանել, որ հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն է:

3. Հաստատել հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մկրտիչ Կիրակոսյանին (անձնագիր՝ AM 0878372, տրված՝ 24.09.2012թ., 001-ի կողմից):

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել՝

1) հիմնադրամի պետական գրանցումը՝ օրենքով սահմանված կարգով.

2) հոգաբարձուների խորհրդի ձևավորումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք), սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

2. Հիմնադրամի անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ՝ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ
- 2) հայերեն կրճատ՝ ԳԾԻԱԿ հիմնադրամ
- 3) ռուսերեն լրիվ՝ ФОНД «Центр содействия интеграции научных программ».
- 4) ռուսերեն կրճատ՝ ФОНД «ЦСИНП»
- 5) անգլերեն լրիվ՝ FUND «Integration Assistance Center for Scientific Programms»

6) անգլերեն կրճատ՝ IACSP FUND:

3. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում:

4. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Աճառյան 31:

5. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (այսուհետ՝ հիմնադիր), որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն է:

6. Հիմնադրամի շահառուները գիտության, կրթության և նորարարության բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

7. Հիմնադրամը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հիմնարկներ,

որոնք գործում են հիմնադրամի անունից՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած կանոնադրությանը համապատասխան:

8. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

9. Հիմնադրամը հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կարող է փոփոխություններ մտցնել սույն կանոնադրության մեջ:

10. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով:

11. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

12. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

13. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքում և կարգով:

14. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

15. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործում է միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

16. Հիմնադրամն օրենքով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական ու վիճակագրական հաշվետվություն:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

18. Հիմնադրամի գործունեության առարկան է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրին մասնակցության վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում «Հորիզոն 2020» ծրագրին Հայաստանի Հանրապետության կողմից համագործակցության ընդհանուր համակարգումը,

2) Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում՝ կապված մասնակցության ֆինանսական և իրավաբանական ասպեկտների հետ, գործընկերներ որոնելու, ինչպես նաև ծրագրերի իրականացման այլ հարցերով,

3) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների հետ համատեղ հիմնադրամի կանոնադրական խնդիրներին վերաբերող ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը.

4) իր ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունների գործունեության զարգացմանն ուղղված նյութական կամ խորհրդատվական աջակցությունը:

19. Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտներում Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերին Հայաստանի Հանրապետությունում գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և առանձին գիտնականների մասնակցության ծավալների ավելացումը, այդ նպատակով համապատասխան տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և տարածումը.

2) Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում «Հորիզոն 2020» ծրագրի թեմատիկ ուղղություններով նշանակված ազգային կոնտակտային անձանց գործունեության և ծրագրի հետ փոխգործակցության համակարգումը, որը ներառում է այդ անձանց գործառույթների իրականացմանն աջակցում, համագործակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, տարեկան հանդիպումների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ազգային կոնտակտային անձանց կազմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկների նախապատրաստումը.

3) Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրի հնարավորությունների օգտագործմամբ գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտներում Հայաստանի Հանրապետության համար նոր ձեռքբերումներին, գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և առանձին գիտնականների հնարավորությունների առավելագույնս օգտագործանը նպաստելը՝ ի շահ նշված ոլորտների կայուն զարգացման:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

20. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր ու օրենքով չարգելված այլ գույք:

21. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

22. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

23. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

1) հիմնադրի կամավոր ներդրումները.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը.

3) ֆիզիկական ու իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները.

4) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

5) դրամաշնորհները.

6) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

24. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի ու դրան հավասարեցված միջոցների և, հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված, փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Հիմնադրամն, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) հիմնադրելու մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

5) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակիցը.

6) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքելու պայմանագրեր.

7) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:

26. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

27. Հիմնադրամը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) տեղեկատվական սպասարկում, խորհրդատվական ծառայություններ,

2) դասընթացների, սեմինարների, շնորհանդեսների, ցուցահանդեսների կազմակերպում:

28. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար հիմնադրամը՝

1) ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.

2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ:

29. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) յուրաքանչյուր տարի օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել՝

ա. հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, տնօրենի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում,

բ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մլն դրամը.

3) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.

5) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Հիմնադրամի մարմիններն են՝

1) հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

2) հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝ հիմնադրամի տնօրենը:

31. Խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Ի պաշտոնե խորհրդի անդամ և նախագահն է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահը: Խորհրդի 1 անդամ նշանակվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի ներկայացմամբ: Խորհրդի մեկական անդամներ նշանակվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի կողմից:

32. Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորությունների սկիզբը կարգավորվում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջին համաձայն: Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

33. Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Հիմնադրամի տնօրենը, խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, դրա մասին տեղեկացնում է հիմնադրին, խորհրդի անդամներին ներկայացրած և նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

34. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) հիմնադրամի ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.

2) հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) վերապատրաստումների վերաբերյալ հայտարարվող և անցկացվող մրցույթների մասին կանոնակարգի մշակումն ու հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) հիմնադրամի տնօրենի և սույն կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) սույն կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամի այլ մարմինների ձևավորումը.

10) սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրությունը փոփոխելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշումների ընդունումը.

11) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

12) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

13) տարեկան մեկ անգամ տնօրենի հաշվետվությունները լսելը.

14) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

15) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

16) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

17) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

18) իր կազմից խորհրդի քարտուղարի ընտրությունը.

19) հիմնադրամի գործարքների կնքման կարգի հաստատումը.

20) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

35. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, կարող է կազմավորել հոգաբարձուների խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

4) տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) օրենքով նախատեսված դեպքերում խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

6) Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարելու է անդամներից մեկը:

36. Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ Հոգաբարձուների խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերի: Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները ինչպես նաև լիազորությունների դադարեցման կարգը սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և տնօրենի հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից տնօրենի աշխատանքային պայմանագիրը ստորագրում է Հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ վերջինիս կողմից լիազորված այլ անձ:

37. Հիմնադրամի տնօրենը՝

1) կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը.

2) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

3) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4) գործում է առանց լիազորագրի.

5) տալիս է լիազորագրեր.

6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

7) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

8) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին.

11) հիմնադրամի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12) հաշվետու է խորհրդին.

13) հիմնադրամի գործարքների կնքման կարգի համաձայն ընդունում է որոշում հիմնադրամի անվամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, կամ վերջինիս գույքն օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված գործարքներ կատարելու մասին.

14) հոգաբարձուների խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշման հիմքով կարող է կատարել Հիմնադրամի տարեկան բյուջեով ամրագրված միջոցների վերաբաշխում մինչև 10-ի չափով:

38. Հիմնադրամի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է զբաղեցնել վճարովի պաշտոններ միայն խորհրդի համաձայնությամբ:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է տարեկան 2 անգամ գումարվող հերթական նիստերի միջոցով: Խորհրդի արտահերթ նիստ գումարում է խորհրդի նախագահը՝ իր կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով: Խորհրդի քարտուղարը 3 աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի արտահերթ նիստի օրակարգի և ժամկետի մասին գրավոր տեղեկացնում է խորհրդի անդամներին:

40. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

41. Եթե խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

42. Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

43. Խորհրդի անդամները կարող են նիստերին մասնակցել նաև ուղիղ հեռակապի միջոցով:

44. Խորհրդի որոշմամբ նիստերը կարող են կազմակերպվել հարցումների միջոցով՝ օգտվելով համացանցի (ինտերնետ) հնարավորություններից: Այդ դեպքում խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի օրակարգի մասին համացանցի միջոցով 10 օր առաջ տեղեկացված և 7 օրվա ընթացքում իրենց դիրքորոշումը ներկայացրած անդամների քվեարկությամբ:

45. Խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում է հիմնադրամի տնօրենը՝ խորհրդակցական ծայնի իրավունքով:

46. Հիմնադրամի տնօրենը որոշումներն ընդունում է ինքնուրույն՝ ելնելով խորհրդի որոշումներից և հիմնադրամի շահերից:

47. Խորհրդի նիստերին խորհրդակցական ծայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված անձինք:

48. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրում են տվյալ նիստին մասնակցող հիմնադրամի մարմնի բոլոր անդամները:

VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

49. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադրի որոշմամբ կամ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

50. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

51. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1) հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) հիմնադրամն իր գործունեությամբ շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.

4) հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.

7) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

52. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

53. Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված՝ պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

54. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

«Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ ստեղծելու հիմնական նպատակը Եվրոպական գիտակրթական տարածքին Հայաստանի Հանրապետության գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտների ինտեգրմանը նպաստելն է, Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասնակցության ֆինանսական, իրավաբանական ասպեկտների, գործընկերներ որոնելու, ինչպես նաև ծրագրերի իրականացման այլ հարցերով խորհրդատվության տրամադրումը, Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրի հնարավորությունների օգտագործմամբ գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտներում Հայաստանի Հանրապետության համար նոր ձեռքբերումներին, գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և առանձին գիտնականների հնարավորությունների օգտագործմանը առավելագույնս աջակցելը՝ ի շահ նշված ոլորտների կայուն զարգացման: Կառույցն իր գործունեության ընթացքում կնպաստի հանրապետության գիտական կազմակերպություններում և բուհերում գործող գիտական խմբերի՝ հետազոտությունների Եվրոպական տարածք ինտեգրվելուն, համաշխարհային մակարդակի գիտական հետազոտություններում անմիջական մասնակից դառնալուն, ինչպես նաև ժամանակակից հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված հետազոտություններում և մշակումներում իրենց ակտիվ դերակատարությամբ հանդես գալուն:

2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերին Հայաստանի Հանրապետությունում գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և առանձին գիտնականների մասնակցության ծավալների ավելացումը, համապատասխան տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունն ու տարածումը, Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական Միության «Հորիզոն 2020» ծրագրին մասնակցության վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում համագործակցության խորացումը:

3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

2016թ. մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրվել և նոյեմբերի 7-ին ուժի մեջ է մտել «Հորիզոն-2020՝ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը: Այն հնարավորություն է տալիս հանրապետության գիտական կազմակերպություններին և անհատ գիտնականներին՝ մասնակցելու Եվրոպական Միության առաջնակարգ գիտական ծրագրերի իրականացմանը, խոշորամասշտաբ միջազգային գիտական համագործակցությունների աշխատանքներին, օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից՝ բարձրացնելով երկրի տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ավելացնել հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները և այլն:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (09.02. 2017թ. թիվ 03/13.1/677-17)</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (13.02. 2017թ. թիվ 01/08.1.1/1244-17)</p>	<p>1. Որոշման նախագծում որպես Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակ ներկայացվում է ՀՀ կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում ՀՀ կողմից մասնակցության ընդհանուր համակարգումը: Մինչդեռ, «Հորիզոն-2020» հետազոտական նորարական ծրագրին ասոցացման համաձայնագրի դրույթներով ազգային մակարդակում նման համակարգող ինստիտուտի ստեղծման անհրաժեշտություն սահմանված չէ: Ծրագրի ներքո իրականացվող մրցույթներին մասնակցության հետ կապված ընթացակարգերն ու անհրաժեշտ փաստաթղթերը տեղակայված են պաշտոնական կայքէջում և ուղղակիորեն հասանելի են ասոցացված երկրներում գիտության ոլորտի ներկայացուցիչներին ու ՓՄՁ-ներին:</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Ասոցացման համաձայնագրով Հիմնադրամի ստեղծում նախատեսված չէ, սակայն ԵՄ «Հորիզոն 2020» ծրագրին հայաստանյան մասնակցությունը համակարգված և բարձր մակարդակով կազմակերպելու համար նման կառույցի ստեղծումն անհրաժեշտ է:</p>

	<p>2. «Հորիզոն-2020»-ի շրջանակներում ըստ տարբեր ոլորտների նշանակված են ազգային կոնտակտային անձինք, որոնց դերը հենց մրցույթներին մասնակցության հետ կապված աջակցության տրամադրումն է: Այս առումով կարևոր է Հիմնադրամի և ազգային կոնտակտային անձանց փոխգործակցության դաշտի որոշակիացումը:</p> <p>3.Նախագծով ներկայացված Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը ներկայացուցչական չէ ըստ «Հորիզոն 2020»-ի ոլորտների, և կարևորվում է կազմի ձևավորումը՝ ոչ միայն ելնելով ԵՄ գիտակրթական տարածքում համեմատաբար մեծ տարածում ունեցող թեմատիկ ուղղություններից, այլև՝ Հայաստանում գիտական ու նորամուծական առկա ներուժի ոլորտային ու թեմատիկ կենտրոնացումից:</p> <p>4.Հաշվի առնելով այն առանցքային հանգամանքը, որ «Հորիզոն 2020»-ին մասնակցությունը հիմնված է գիտական ոլորտում առկա ներուժի ու պահանջարկի վրա, Հիմնադրամի հետագա արդյունավետ գործունեությունն ու ֆինանսական կայունությունն ապահովելու տեսակետից կարևոր է նախևառաջ որոշակիորեն հստակեցված տեսլականի առկայություն առնվազն դրա ստեղծման ու պահպանման, անհրաժեշտ կարողությունների ձևավորման համար պահանջվող ռեսուրսների, հետագայում շահառուներին մատուցվելիք ծառայությունների և/կամ իրականացվելիք աշխատանքների համար վճարի հնարավոր լուծումների, ինչպես նաև՝ ծախսարդյունավետության ասպեկտների մասով:</p>	<p>Չի ընդունվել: Հիմնադրամի գործառույթները չեն համընկնում ազգային կոնտակտային անձանց վերապահված գործառույթների հետ: Հիմնադրամը, ի թիվս այլ գործառույթների, հանդես է գալու որպես ազգային կոնտակտային անձանց գործունեությունը համակարգող և օժանդակող օղակ:</p> <p>Չի ընդունվել: Հոգաբարձուների խորհրդում բոլոր թեմատիկ ուղղություններով ներկայացուցիչների ընդգրկումը նպատակահարմար չէ: Խորհրդում ընդգրկվել են «Հորիզոն 2020» ծրագրի հիմնական շահառու հանդիսացող կողմերը: Անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նեղ ոլորտային ծրագրի առանձնահատկությունները, կարող են հրավիրվել այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ ևս:</p> <p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն (21.02. 2017թ. թիվ</p>	<p>1.Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ կետով հաստատվող կանոնադրության (այսուհետ՝</p>	<p>Ընդունվել է: Նախագծի 35-րդ կետում կատարվել է լրացում՝ համապատասխան բովանդակությամբ:</p>

<p>01/11-1/2731-17)</p>	<p>Կանոնադրություն) 34-րդ կետում ներառել դրույթ, որով կսահմանվի, որ Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարելու է անդամներից մեկը:</p> <p>2.Կանոնադրության 37-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ Հիմնադրամի տնօրենը համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում իրականացնում է հիմնադրամի բյուջեով ուղղակիորեն չնախատեսված ծախսեր՝ պայմանով, որ առկա է հիմնադրամի երկու խորհրդի անդամների, այդ թվում՝ նախագահի գրավոր համաձայնությունը: Կարծում ենք, որ վերոնշյալ ենթակետը չի բխում Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Բացի այդ, ելնելով իրավական որոշակիության սկզբունքից՝ առաջարկում ենք հստակեցնել «չնախատեսված ծախսեր» եզրույթը:</p> <p>3.Նախագիծն ունի լրացուցիչ հիմնավորման կարիք: Մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ ներկայացնել Հիմնադրամի ստեղծման իրավական հիմքերը, ստեղծման և գործունեության իրականացման ֆինանսավորման աղբյուրները:</p> <p>4.Առաջարկվում է նաև քննարկել Հիմնադրամի գործունեության առարկային և նպատակներին վերաբերող դրույթները՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի կողմից իրագործելու հարցը:</p>	<p>Ընդունվել է: Կանոնադրության 37-րդ կետի 14-րդ ենթակետը խմբագրվել է:</p> <p>Չի ընդունվել: Նախագիծը բավականաչափ հիմնավոր է: Հիմնադրամի գործունեության իրականացման ֆինանսավորման աղբյուրները թվարկված են Կանոնադրության 23-րդ կետում: Հիմնադրամի ստեղծումը պայմանավորված է «Հորիզոն 2020» ծրագրին հայաստանյան մասնակցությունը համակարգված և պատշաճ մակարդակով կազմակերպելու անհրաժեշտությամբ:</p> <p>Չի ընդունվել: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմը իրականացնում է կոմիտեի կանոնադրությամբ սահմանված գործառույթները:</p>
<p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (16.02.2017թ. թիվ 24-01/68)</p>	<p>Հաշվի առնելով, որ Հորիզոն 2020 ծրագիրն ավարտվում է 2020 թվականին, նմանատիպ կառույցի ստեղծումը համարվում է ժամանակավրեպ: Առաջարկվում է այդպիսի կառույցը ստեղծել արդեն արդյունավետ գործող և համապատասխան փորձ ունեցող ԳԱԱ ստորաբաժանման հենքի վրա:</p>	<p>Չի ընդունվել: «Հորիզոն 2020»-ը նախապատրաստական շրջան է, որը հետագայում պետք է ապահովի մեր գիտական համայնքի ակտիվ մասնակցությունը ԵՄ 9-րդ շրջանակային ծրագրին: Առաջարկվող կառույցի ստեղծումը</p>

		<p>համարում ենք նպատակահարմար և հեռանկարային: Առաջարկվող կառույցի և ՀՀ ԳԱԱ համակարգում գործող ստորաբաժանման գործառույթների միջև համընկնում չկա:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1. Որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 4-րդ կետում «գործադիր մարմնի ղեկավարի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «տնօրենի» բառով, քանի որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարն է տնօրենը, գործադիր տնօրենը կամ գլխավոր տնօրենը: Միևնույն ժամանակ, նախագծով հաստատվող կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) 30-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարն է հիմնադրամի տնօրենը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի ներքին հակասությունները:</p> <p>2. Նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետում «ՀՀ օրենսդրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց հիմնադրամները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:</p> <p>3. Նախագծի տեքստում անհրաժեշտ է հստակեցնել տերմինների գործածությունը: Մասնավորապես՝ նախագծում և կանոնադրության վերնագրում գործածվում են «գիտական ծրագրերի ինտեգրման» բառերը, իսկ կանոնադրության 1-ին կետում խոսք է գնում «գիտական ծրագրերին ինտեգրման» մասին: Հետևապես, նախագծի տեքստում տերմինների միասնականություն ապահովելու նպատակով նշված բառերն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել միմյանց: Հիշյալ առաջարկությունը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներից:</p> <p>4. Կանոնադրության 6-րդ կետից հանել «և սույն կանոնադրությամբ</p>	<p>Ընդունվել է: Որոշման նախագծի 4-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 6-րդ</p>

	<p>նախատեսված» բառերը, քանի որ կանոնադրությամբ նախատեսված բնագավառներ չկան:</p> <p>5. Կանոնադրության 10-րդ կետի համաձայն՝ հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով): Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով նման դրույթներ չեն նախատեսվում: Նույն կետում «Հիմնադրամը կարող է ունենալ խորհրդանիշ, դրոշմներ ու բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ» բառերն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն՝ հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:</p> <p>6. Կանոնադրության 13-րդ կետն անհրաժեշտ է հանել, քանի որ այն չի բխում «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներից և կրկնում է կանոնադրության 12-րդ կետի դրույթները: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները:</p> <p>7. Կանոնադրության 17-րդ կետից անհրաժեշտ է հանել «և այլ իրավական ակտերով» բառերը՝ նկատի ունենալով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:</p> <p>8. Կանոնադրության 19-րդ կետի 2-րդ ենթակետում հստակեցման կարիք ունեն «ազգային կոնտակտային անձանց» բառերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:</p> <p>9. Կանոնադրության 24-րդ կետից անհրաժեշտ է հանել «հիմնադրամի հիմնադիրը» բառերը, քանի որ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամի</p>	<p>կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 10-րդ կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 13-րդ կետը հանվել է:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 17-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է հստակեցում:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 24-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
--	--	---

	<p>հիմնադիրը չի կարող հանդիսանալ Կանոնադրությամբ նախատեսված շահառու՝ համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:</p> <p>10. Կանոնադրության 27-րդ կետով սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 874-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» պահանջներին:</p> <p>11. Կանոնադրության 29-րդ կետի 2-րդ ենթակետի «ա.» պարբերությունում «կառավարչի» բառը փոխարինել «տնօրենի» բառով՝ նկատի ունենալով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և սույն կանոնադրության 30-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:</p> <p>12. Հոգաբարձուների խորհրդի կազմավորման կարգը հստակեցնելու նպատակով կանոնադրության 31-րդ կետի 2-րդ նախադասությունում «Ի պաշտոնե խորհրդի նախագահն է» բառերը փոխարինել «Ի պաշտոնե խորհրդի անդամ և նախագահն է» բառերով, 4-րդ նախադասությունում «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության» բառերը փոխարինել «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի» բառերով, «ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության» բառերը փոխարինել «ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի» բառերով, իսկ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի» բառերը փոխարինել «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի» բառերով:</p> <p>13. Կանոնադրության 32-րդ կետը հակասում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջին, որի համաձայն՝ հոգաբարձուների խորհրդի առաջին կազմի անդամների լիազորություններն սկսվում են հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից: Երկրորդ</p>	<p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 27-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 29-րդ կետի 2-րդ ենթակետի «ա.» պարբերությունում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 31-րդ կետի 2-րդ նախադասությունում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 32-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
--	--	--

	<p>նախադասությունից հանել «առաջին կազմի» բառերը:</p> <p>14. Քանի որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով միայն կանոնադրությամբ նման հնարավորություն նախատեսված լինելու դեպքում, ուստի կանոնադրությունում առաջարկվում է ավելացնել դրույթ այդ հնարավորության մասին, կամ կանոնադրության 34-րդ կետից հանել 8-րդ ենթակետը:</p> <p>15. Կանոնադրության 37-րդ կետի 14-րդ ենթակետն անհասկանալի է և հակասում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, որի համաձայն, հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և հիմնադրամի կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:</p>	<p>Ընդունվել է: Կանոնադրության 34-րդ կետից հանվել է 8-րդ ենթակետը:</p> <p>Ընդունվել է: Կանոնադրության նախագծի 37-րդ կետի 14-րդ ենթակետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
--	---	---